«ՎԻՏԱՆ» ԿԱՋԱԿՑԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ստեփանակերտ. 25 հոկտեմբերի – Ստեփանակերտի «Վիտա» միությունը, որը միավորում է ղարաբաղյան պատերազմի հաշմանդամներին, կազմակերպել է ողնաշարի ծանր վնասվածքներով նախկին ազատամարտիկների այց Երեւան, որտեղ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի բաժանմունքի կողմից Հայաստանում անցկացվում են տարբեր մասնագիտությունների բազմամսյա դասընթացներ: Ինչպես տեղեկացրեց միության նախագահ Հրաչիկ Իշխանյանը, ուսումն ավարտելուն պես, որն իր հերթին կզուգակցվի մարզական եւ զվարճալի միջոցառումների հետ, հաշմանդամները ձեռք կբերեն ոսկերչի, փայտի փորագրողի, գորգագործի, կոշկակարի եւ այլ մասնագիտություններ, կկարողանան սովորեցնել ուրիշներին: Միությունը մտադիր է այսուհետ մարդկանց ուղարկել նման դասընթացների, քանզի սույն թվականի մայիսից վերոհիշյալ հաշմանդամներին վերցրել է իր հովանավորության տակ:

Հ. Իշխանյանի խոսքերով, միության անդամները չեն ուզում ապրել պետության հաշվին եւ այդ պատճառով պատրաստվում են զբաղվել նաեւ կոմերցիոն գործունեությամբ: Վաստակած միջոցները թույլ կտան բարելավել ոչ միայն հաշմանդամների սոցիալական վիճակը, այլ նաեւ նրանց համար սարքավորել արվեստանոցներ, մարզական դահլիճ, հանգստի համար սենյակներ, վիրավոր մարտիկներին սանատոր բուժման ուղարկել:

«ՓԱՍՏ-ՄՈՒՆՔ»